ՀՍԿԱՆ

(Կովկասյան առասպել)

Լավ չեմ հիշում, թե որ դարում,
Հին ժամանակ, մեր աշխարհում
Ասում են թե՝ կար մի իշխան.
Մի մեծ իշխան, էնքան ուժեղ,
Որ թե մարդիկ նըրա աչքում,
Թե՛ հասարակ ճանճ ու մըժեղ։
Ինչ որ աներ ու կամենար,
Օրենք էր էն երկրի համար.
Ո՞վ էր գըլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգար նըրա դիմաց։
Ուներ անթիվ ու անքանակ
Ոչխարի հոտ, մարդի բանակ,
Կովի նախիր, խոզի բոլուկ,
Երամակներ ձիու, ջորու,
Էս բոլորը ցըրված, փըռված
Մինչև ծովի ափը հեռու։
Մինչև ուր որ քըշեր, տաներ,
Իր աշխարհքի սահմանն էն էր.
Ո՞վ էր գըլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգար նըրա դիմաց։
Մի անգամ էլ էս իշխանը
Երբ նըստած էր իրեն տանը,
Լեղապատառ ներս ընկավ տուն
Իր հոտերի վերակացուն.
— Ապրած կենաս, մեր տեր իշխան,
Հապա՛, էսպես հրաշք մի բան.

Արածում էր ծովի ափին
Բազմությունը քո հոտերի,
Մին էլ տեսնենք՝ ծովի միջին
Մի վիթխարի մարդ է գալի։
Մի վիթխարի մարդ եմ ասում,
Որ մենք իր մոտ լու ենք չընչին,
Ծովը մինչև ծունկն է հասնում,
Իսկ գըլուխը ամպի միջին։
Եկավ, կանգնեց մեր հանդիման
Ու որոտաց ամպի նըման.
«Ո՞վ է, ասավ, էսպես բերում
Թողնում ապրանքն իմ հանդերում.
Կորե՛ք իսկույն, դուք մարդուկներ,
Ձեռըս քանի չի հասել դեռ...»։
Էն ժամանակ վեր կացա ես
Ու պատասխան տըվի էսպես.
«Էդ սևակնած, մութ ամպերում
Ջուր ես էդքան բարձըր գոռում.
Ով էլ լինես, ուսկից էլ գաս,
Էս մի բանը լավ իմանաս,
Դու, երկնահաս, ահեղ հըսկա,
Մեծ իշխանի ապրանքն է սա,
Ո՞վ է գըլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգա նըրա դիմաց»։
Բայց ինձ իսկի չըլսեց էլ
Էն անճոռնի աժդահակը,
Էն ամպերից ցած կըռացավ,
Ձեռը կոխեց ծովի տակը,
Դուրս հանեց մի ձուկն ահագին

Ու դեմ արավ արեգակին,
Որ խորովի...» — Հազիվ էսքան
Պատմեց հովիվն իշխանական
Ու վեր ընկավ, շունչը փչեց։
60 Խիստ զայրացավ իշխանը մեծ.
— Ո՞վ է, ասավ, համարձակվել
Իմ տերության սահմանն եկել
Ու էդպես էլ վրրես հաչում...
Ինձնից ուժեղ չեմ ճանաչում
65 Ես ոչ մի տեղ և ոչ մեկին...
Էսպես ասավ ու զայրագին
Հրրամայեց՝ զորքերը գան։
Հրրամայեց՝ զորքերն եկան.
— Կեցցե՛ մեր տեր, մեր թագավոր,
70 Անհաղթ, անմահ, ամենազոր...
— Ապրե՛ք, ասավ իշխանը սեգ,
Ելեք իսկույն ու գընացեք,
Մանուկ ու ծեր
Իմ առյուծներ,
75 Ո՞վ է, տեսեք, վրրես հաչում
Ու իմ ուժը չի ճանաչում։
Ցույց տրվեք դուք, որ ոչ մի տեղ
Չրկա ոչ ոք ինձնից ուժեղ...
Ասավ՝ զորքերն իրենց կարգին
80 Փող փրչեցին, թրմբուկ զարկին,
Շրրըխկոցով, զրրընգոցով
Ճամփա ընկան դեպի մեծ ծով։

Հասան, տեսան — ա՛յ քեզ հրսկա,

Գըլուխն էստեղ, ոտներ չըկա.
85 Գընա՛, գընա՛, թե որ գըտնես...
Երկար ու մին ձըգված էսպես,
Հըսկայական քընով քընած։
Էստեղ, էնտեղ դիրքեր բռնած՝
Դես չոքեցին, դեն պառկեցին,
90 Հա զարկեցին ու զարկեցին,
Տեսան տեղից ժաժ չի գալի,
Խըռըմփում է զարհուրելի,
Խըռըմփոցից, ինչ-որ խոսում,
Մարդիկ իրար ձեն չեն լըսում։
95 Մոտ գընացին, էլի՛, էլի՛...
Դարձյալ տեղից ժաժ չի գալի։
Կամաց-կամաց սիրտ առնելով,
Գոռգոռալով, հարայ տալով,
Դուրս թափվեցին թաքուստներից,
100 Ելան վըրեն, դեսից, դենից,
Որը ոտին,
Որը քըթին,
Որը լանջին,
Որն ականջին,
105 Փորի վըրա, միրքի միջում,
Ջի են քըշում, նիզակ ճոճում,
Ջարկում, զարկում,
Ջըգում, թըքում,
Հայհոյում են էսպես, էնպես...

110 Մին էլ հըսկան էն սարի պես
Վըրա նստեց — մե՛ծ, ահարկու.

Ինչ պատահեց — ոչ տեսնես դու։
Հազարներով մարդն ու իր ձին
Տակովն եղան, կոտորվեցին.
115 Որն էլ գլխից, քթից, լանջից,
Կամ ուսերից, կամ ականջից
Ներքև ընկավ՝ թե մարդ, թե ձի,
Նրրա օրն էլ դու իմացի։
Շատ զարմացավ հրրեշ հրսկան,
120 Թե, Տեր Աստված, արդյոք էսքան
Մանրր-մունրր ինչ բաներ են,
Որ եկել են թափվել վրրեն։
Տեսավ, ինչ որ կենդանի կան՝
Վազ են տալի, թե ետ գրնան.
125 Բուռն արավ իր բրռնովը մեծ,
Իրար խառնեց, ողջ հավաքեց
Գրրպանն ածավ
Ու վեր կացավ,
Լրնգլրնգալեն իրիկունը
130 Գրնաց հասավ իրենց տունը։
Տանը իր պես մեծ, ահագին
Մի մեր ուներ, բարի մի կին։
Գրնաց հրսկա մորը պատմեց
Թե իրեն հետ ինչ պատահեց,
135 Ու գրրպանից հանեց բոլոր՝
Ահից խելառ ձին-ձիավոր։
Բարի կինը հենց որ տեսավ,
— Ամա՛ն, որդի, վա՛յ ինձ, ասավ.
Ինչ ես անում էդ խեղճերին,
140 Բա չե՞ս տեսնում, թե քո ձեռին

Ոնց են դողում։ Ասենք մեծ ես,
Մի՞թե պիտի փոքրին տանջես։
Մեծ թե փոքրը, ինչ էլ լինի,
Ամեն ապրող շունչ կենդանի,
Որ ծընվել է արևի տակ,
Էս աշխարհքում միատեսակ,
Մինը պակաս, մյուսը ավել,
Ողջ էլ գիտեն խընդալ, ցավել,
Չըպարծենա երբեք ոչ ոք,
Թե ինքն անհաղթ մի բան է ջոկ.
Միշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը՝ մահ...
Բա՛ց թող, որդիս,
Բա՛ց թող՝ գընան,
Ապրեն ազատ
Ուր կամենան։
Ու, հընազանդ մոր խըրատին,
Իսկույն հանեց հըսկա որդին
Իր գըրպանից ձին-ձիավոր,
Իրար խառնած զորքը բոլոր,
Թողեց գընան՝
Ուր կամենան։